**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/10-1**

ք. Երևան 03.02 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մոսէսքո» ՍՊԸ -ն ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սպառազինության յուղերի և քսուքների /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:
2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**
3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 60 օրից ավել.
3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.
ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.
բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.
գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.
3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.
ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,
բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:
3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.
3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:
3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.
3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամագիրը.
3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 60 օրից ավել.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր նիրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ պրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում աճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև այմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին անուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի ամապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում ատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու տևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, ակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված ործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար ճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ ախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի ողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի պրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել պրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի ատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը . տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց կսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 30 379 120 (երկու հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր յոթսունինը հազար հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի րանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի ատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
4.1.1 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 230 379 120 (երկու հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր յոթսունինը ազար հարյուր քսան) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ համապատասխան ֆինանսական միջոցներ դեռևս ախատեսված չեն՝ Ապրանքը կմատակարարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի ամաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագրի կնքման օրվան հաջորդող տարվա ընթացքում Ապրանքի ատակարարման համար միջոցներ չնախատեսվելու դեպքում Պայմանագիրը կլուծվի:
4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները աճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-նդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային րվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի ամար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով ախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում րամական միջոցները նախատեսված են:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական տանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ամկետներում:
6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-նդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է րկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է երկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 րինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):
6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը ամապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման րդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝
ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.
բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է երկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու յատճառաբանված մերժումը:
6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի երժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանա-րությունը:
6.6 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների ապրանքների մասով յուրաքանչյուր խմբաքանակի ատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ մբաքանակի ապրանքների ծագման երկրի (ԵՏՄ անդամ պետության) սերտիֆիկատը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ ատակարարման ժամկետների պահպանման համար:
7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն մատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս մատրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի ւգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է ւրկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման րջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի արգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և րանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ ործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Լաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ղայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով րապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի ղաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով նտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, ամարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ւմբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության րենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների վազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ւմբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի անրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական ատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք ւերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, ւրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4,4.1 հավելվածները, համարվում են ւայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության ռավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈւ հկունքի վարչություն:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊժԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892
տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով
գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Անվանումը | Տեխնիկական հատկանիշը |
|---|---|---|
| 1. | Վերետիոն ԱՈՒ | ՏՊ 38.1011232-89 Ծովային և ցամաքային հատուկ տեխնիկայի հիդրավլիկ համակարգի համար<br>- կինեմատիկ մածուցիկությունը 40°C դեպքում՝ 16-22մմ²/վ<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 165°C -ից ոչ ցածր, -սառեցման ջերմաստիճանը՝ -45°C -ից ոչ բարձր,<br>- գույնը ոչ ավել 2.5 միավոր, -թթվային թիվ ոչ ավել 0.07 մգ KOH/գր,<br>- ջրի և մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ բացակա:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |
| 2. | ՖՊ-10 | ԱՄՆ »MPC« ֆիրմայի արտադրանք<br>Հրաձգային և հրետանային զենքի մաքրման, յուղման և կոնսերվացման համար նախատեսված յուղ:<br>- կինեմատիկ մածուցիկությունը<br>40°C դեպքում՝ 25մմ²/վ<br>100°C դեպքում՝ 3.9 մմ²/վ<br>- ջրում չլուծվող, բաց դեղին գույնի<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 138°C-ից ոչ ցածր,<br>· սառեցման ջերմաստիճանը՝ -45°C -ից ոչ բարձր,<br>· պղտորման ջերմաստիճանը՝ -9.8°C-ից ոչ բարձր,<br>· խտությունը 15°C դեպքում՝0.950գ/սմ³-ից ոչ ավելի:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ 200 լ-ոց տարաներով |
| 3. | Կոմպրեսորա յին ԿԶ-10 | ՏՊ 38.401724-88 Մխոցային և ռոտացիոն կոմպրեսորների համար:<br>- կինեմատիկ մածուցիկությունը<br>100°C դեպքում՝ 8.8-10.5մմ²/վ<br>40 °C դեպքում՝ 73.7-96.2 մմ²/վ<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 205°C -ից ոչ ցածր,<br>- թթվային թիվ 0.2 մգ KOH/գ<br>- կոկսելիությունը՝ ոչ ավել 0,2%-ից,,-մոխրայնություն ոչ ավել 0.005,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -10°C -ից ոչ բարձր, -մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 90<br>- խտությունը 20°C դեպքում՝ 900կգ/մ³-ից ոչ ավելի:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |
| 4. | Տրանսֆորմա-տորային ԳԿ | ՏՊ 38.101-1025-85 Տրանսֆորմատորների լցավորման համար:<br>- կինեմատիկ մածուցիկությունը<br>50°C դեպքում՝ 9մմ²/վ-ից ոչ պակաս<br>-30 °C դեպքում՝ 1200 մմ²/վ-ից ոչ ավել<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 135°C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -45°C -ից ոչ բարձր,<br>- թթվային թիվ ոչ ավել 0.01 մգ KOH/գ<br>- մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ բացակայություն,<br>- գույնը ոչ ավել 1 միավոր, -խտությունը 20°C դեպքում՝ 895կգ/մ³-ոչ ավելի:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |
| 5. | ԽՖ-22-24 | ԳՕՍՏ 5546 Կենտրոնախույս կոմպրեսորներով սառեցնող մեքենաների, ինչպես նաև խլադոնով աշխատող մխոցային կոմպրեսորների համար:<br>- կինեմատիկ մածուցիկությունը՝50°C դեպքում՝ 24.5–28.4 մմ²/վ,<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 130°C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -55°C -ից ոչ բարձր,<br>- թթվային թիվ ոչ ավել 0.04 մգ KOH/գ<br>- մեխանիկական մասնիկների և ջրի առկայությունը՝ բացակա:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |
| 6. | Ցիատիմ-201 | ԳՕՍՏ 6267-74 Սարքավորման քսուք:<br>- միատարր քսուք դեղինից մինչև շագանակագույն,<br>- կաթիլընկման ջերմաստիճանը՝175°C-ից ոչ ցածր,<br>- մեխանիկական մասնիկներ՝ բացակա,<br>o Կոռոզիայի բացակայություն -ջրի առկայությունը՝ բացակա:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |

| Հ/հ | Անվանումը | Տեխնիկական հատկանիշը |
|---|---|---|
| 7. | Ցիատիմ-203 | ԳՕՍՏ 8773 Մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատող մեխանիզմների յուղման համար:<br>- միատարր քսուք, -մուգ շագանակագույն կամ կանաչաշագանակագույն,<br>- Կոռոզիայի բացակայություն, -կաթիլընկման ջերմաստիճանը՝ 160°C -ից ոչ ցածր,<br>- պենետրացիան 25°C դեպքում՝ 250-300 մմ/10, -ծծմբի մասնաբաժինը՝ 0.2%-ից ոչ պակաս:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: |
| 8. | Քսուք 158 | ՏՊ 38.10320-77<br>- Կաթիլընկման ջերմաստիճանը՝ 132°C-ից ոչ ցածր,<br>- պենետրացիան 25°C-ի դեպքում 260-350մմ*10⁻¹,<br>- մածուցիկությունը 0°C-ի դեպքում և դեֆորմացիայի արագության գրադիենտը 10վ⁻¹՝ 400Պա*վ-ից ոչ ավել,<br>- ազատ հիմքերի մասնաբաժինը՝ 0.2%-ից ոչ ավել,<br>- ջրի մասնաբաժինը՝ 0.5%-ից ոչ ավել, -ազատ օրգանական թթուների մասնաբաժինը՝ բացակա:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: |
| 9. | Արգելակման հեղուկ Ռոսա Դոտ-4 | ՏՊ 2451-004-10488057-94<br>- համասեռ, թափանցիկ բաց դեղինից մինչև մուգ դեղին<br>- կինեմատիկական մածուցիկությունը՝<br>100°C ոչ պակաս 2,0 մմ²/վ,<br>50°C ոչ պակաս 5,0 մմ²/վ,<br>- եռման ջերմաստիճանը՝ 260 °C-ից ոչ ցածր,<br>- մեխանիկական մասնիկների և ջրի առկայությունը՝ բացակա,<br>- 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 70 °C 2-10 % -ph 7.5-9.0,<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով: |
| 10. | Ամորտիզացիոն հեղուկ ԱԺ-12 | ԳՕՍՏ 23008-78 Ամորտիզացիոն հեղուկ, անվավոր տրանսպորտի և հատուկ մեքենաների համար<br>- կինեմատիկ մածուցիկությունը<br>100°C դեպքում՝ 3.6մմ²/վ-ից ոչ պակաս,<br>50°C դեպքում՝ 12.0մմ²/վ-ից ոչ պակաս,<br>-40 °C դեպքում՝ 6500 մմ²/վ-ից ոչ ավել,<br>- բռնկման ջերմաստիճանը՝ 165°C -ից ոչ ցածր, -սառեցման ջերմաստիճանը՝ -42°C -ից ոչ բարձր,<br>- Կոռոզիայի բացակայություն, -մեխանիկական մասնիկների առկայությունը՝ բացակա:<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |
| 11. | ՊԷՍ-3Դ | ՏՊ 2229-009-17361162-2001 Կիրառվում է -60°C -ից 100°C պայմաններում աշխատող ավտոմատիկայի շարժաբերների էլեկտրոհիդրավլիկ հրիչներում:<br>- թափանցիկ հեղուկ՝ առանց մեխանիկական մասնիկների,<br>- կինեմատիկ մածուցիկությունը 20°C դեպքում՝ 14-17 սՍտ, -բռնկման ջերմաստիճանը՝ 125°C -ից ոչ ցածր,<br>- ջրի մասնաբաժինը՝ 0.01%-ից ոչ ավել, -խտությունը 20°C դեպքում՝ 0.860-1.18կգ/մ³<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով |

**Ծանոթություն**

1. Հաշվի առնելով այն, որ նյութական միջոցները արտադրվում են տարբեր գործարաններում՝ նրանց ԳՕՍՏ-երը կամ ՏՊ-ները կարող են փոփոխվել, սակայն որակը և պարամետրերը պետք է համապատասխանեն գործարանային որակի անձնագրին: Ապրանքների ընդունումն իրականացնել արտադրող գործարանի որակի անձնագրի և համապատասխանության սերտիֆիկատի առկայության դեպքում:
2. Ապրանքների ձեռք բերման անհրաժեշտ պայման է դրանց չօգտագործված լինելը:
3. Մատակարարման վայրը՝ Արոլյանի և Ղալթաղչիի ՎՔՆ պահպանման բազաներ:

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով
գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վերետիոն ԱՌԻ | կգ | 3000 | 1089 | 3267000 | |
| 2 | ՖՊ-10 | կգ | 20000 | 9600 | 192000000 | |
| 3 | Կոմպրեսորային ԿՁ-10 | կգ | 400 | 1134 | 453600 | |
| 4 | Տրանսֆորմատորային ԳԿ | կգ | 600 | 1233 | 739800 | |
| 5 | ԽՖ-22-24 | կգ | 40 | 2328 | 93120 | |
| 6 | Ցիատիմ-201 | կգ | 3000 | 1602 | 4806000 | |
| 7 | Ցիատիմ-203 | կգ | 1500 | 1602 | 2403000 | |
| 8 | Քուպ 158 | կգ | 100 | 1938 | 193800 | |
| 9 | ՌՈՍԱ-ԴՕՏ-4 | կգ | 10000 | 909 | 9090000 | |
| 10 | Ամոռտիզացիոն ԱԺ-12 | կգ | 1000 | 1284 | 1284000 | |
| 11 | ՊԷՍ-3Դ | կգ | 600 | 26748 | 16048800 | |
| Ընդամենը 230 379 120 (երկու հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր յոթսունինը հազար հարյուր քսան) ՀՀ դրամ | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով
գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վերետիոն ԱՌԻ | կգ | 3000 | 1089 | 3267000 | Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում |
| 2 | ՖՊ-10 | կգ | 20000 | 9600 | 192000000 | |
| 3 | Կոմպրեսորային ԿՁ-10 | կգ | 400 | 1134 | 453600 | |
| 4 | Տրանսֆորմատորային ԳԿ | կգ | 600 | 1233 | 739800 | |
| 5 | ԽՖ-22-24 | կգ | 40 | 2328 | 93120 | |
| 6 | Ցիատիմ-201 | կգ | 3000 | 1602 | 4806000 | |
| 7 | Ցիատիմ-203 | կգ | 1500 | 1602 | 2403000 | |
| 8 | Քսուք 158 | կգ | 100 | 1938 | 193800 | |
| 9 | ՌՈՍԱ-ԴOS-4 | կգ | 10000 | 909 | 9090000 | |
| 10 | Ամորտիզացիոն Աժ-12 | կգ | 1000 | 1284 | 1284000 | |
| 11 | ՊԷՍ-3Դ | կգ | 600 | 26748 | 16048800 | |

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով
գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը __________ | գտնվելու վայրը __________ |
| հհ __________________ | հհ __________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ __________________ | հվհհ __________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը ախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և նման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով
գնման պայմանագրի

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ------------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- – -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ՇՀԱՊՁԲ-7/10-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 31 .03.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մոսէսքո» ՍՊԸ -ն ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 03.02.2017թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/10-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ Նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին սույն համաձայնագրով մատակարարվելիք /հեղուկ հիդրավլիկ ՊԵՍ-3Դ/ ապրանքատեսակի միավորի գինը նվազեցնել և սահմանել՝ 26 600 ՀՀ դրամ:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **38 290 320 /երեսունութ միլիոն երկու հարյուր իննսուն հազար երեք հարյուր քսան / ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Նար-Դոս |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050022417711001 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 04214892 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |

Հավելված N 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հ/հ | Գնման առարկան | Չ/մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ եռամսյակի |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 1 | Վերետիրոն ԱՌԻ | կգ | 3000 | 1089 | 3267000 | 3000 |
| 2 | Կոմպրեսսորային ԿՁ-10 | կգ | 400 | 1134 | 453600 | 400 |
| 3 | Տրանսֆորմատորային ԳԿ | կգ | 600 | 1233 | 739800 | 600 |
| 4 | ԽՖ-22-24 | կգ | 40 | 2328 | 93120 | 40 |
| 5 | Ցիատիմ-201 | կգ | 3000 | 1602 | 4806000 | 3000 |
| 6 | Ցիատիմ-203 | կգ | 1500 | 1602 | 2403000 | 1500 |
| 7 | Քուպ 158 | կգ | 100 | 1938 | 193800 | 100 |
| 8 | ՌՈՍԱ-ԴՕՏ-4 | կգ | 10000 | 909 | 9090000 | 10000 |
| 9 | Ամոռտիզացիոն Աժ-12 | կգ | 1000 | 1284 | 1284000 | 1000 |
| 10 | ՊԷՍ-3Դ | կգ | 600 | 26600 | 15960000 | 600 |

Հավելված N 2

## Վճարման ժամանակացույց

| հ/հ | Գնման առարկան | CPV կոդ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. Ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ | հոկտ | նոյեմբ | դեկտեմբ |
| 1 | Վերետիրոն ԱՌԻ | 09211600/4/4/3 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 |
| 2 | Կոմպրեսսորային ԿՁ-10 | 09211200/2/4/3 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 |
| 3 | Տրանսֆորմատորային ԳԿ | 09211620/2/4/3 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 |
| 4 | ԽՖ-22-24 | 09211620/3/4/3 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 |
| 5 | Ցիատիմ-201 | 24951100/1/4/3 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 |
| 6 | Ցիատիմ-203 | 24951100/2/4/3 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 |
| 7 | Քուպ 158 | 24951100/7/4/3 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 |
| 8 | ՌՈՍԱ-ԴՕՏ-4 | 09211650/1/4/3 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 |
| 9 | Ամոռտիզացիոն Աժ-12 | 09211800/1/4/3 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 |
| 10 | ՊԷՍ-3Դ | 24951300/3/4/3 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 30.06. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մոսէսքո» ՍՊԸ -ն ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 03.02.2017թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/10-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը և 31.03.2017թ. կնքված № 1 Համաձայնագիրը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Սույնով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի հիման վրա կնքված № 2 Համաձայնագրին կից գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություններ, որոնք ներկայացված են սույն փոփոխությանը կից №№ 1 և 2 Հավելվածներով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է՝ 3 էջից, հայերենով, կնքվում է երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Նար-Դոս |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050022417711001 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 04214892 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

մինչև փոփոխությունը

| հ/հ | Գնման առարկան | Չ/մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ եռամսյակի |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 1 | Վերետիոն ԱՈԻ | կգ | 3000 | 1089 | 3267000 | 3000 |
| 2 | Կոմպրեսորային ԿՁ-10 | կգ | 400 | 1134 | 453600 | 400 |
| 3 | Տրանսֆորմատորային ԳԿ | կգ | 600 | 1233 | 739800 | 600 |
| 4 | ԽՖ-22-24 | կգ | 40 | 2328 | 93120 | 40 |
| 5 | Ցիատիմ-201 | կգ | 3000 | 1602 | 4806000 | 3000 |
| 6 | Ցիատիմ-203 | կգ | 1500 | 1602 | 2403000 | 1500 |
| 7 | Քսուք 158 | կգ | 100 | 1938 | 193800 | 100 |
| 8 | ՌՈՍԱ-ԴOS-4 | կգ | 10000 | 909 | 9090000 | 10000 |
| 9 | Ամորտիզացիոն Ամ-12 | կգ | 1000 | 1284 | 1284000 | 1000 |
| 10 | ՊԷՍ-3Դ | կգ | 600 | 26600 | 15960000 | 600 |

թիվ 1 փոփոխությամբ

| հ/հ | Գնման առարկան | Չ/մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ եռամսյակի | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | հուլիս |
| 1 | Վերետիոն ԱՈԻ | կգ | 3000 | 1089 | 3267000 | - | 3000 |
| 2 | Կոմպրեսորային ԿՁ-10 | կգ | 400 | 1134 | 453600 | 400 | |
| 3 | Տրանսֆորմատորային ԳԿ | կգ | 600 | 1233 | 739800 | - | 600 |
| 4 | ԽՖ-22-24 | կգ | 40 | 2328 | 93120 | - | 40 |
| 5 | Ցիատիմ-201 | կգ | 3000 | 1602 | 4806000 | 3000 | |
| 6 | Ցիատիմ-203 | կգ | 1500 | 1602 | 2403000 | - | 1500 |
| 7 | Քսուք 158 | կգ | 100 | 1938 | 193800 | 100 | |
| 8 | ՌՈՍԱ-ԴOS-4 | կգ | 10000 | 909 | 9090000 | - | 10000 |
| 9 | Ամորտիզացիոն Ամ-12 | կգ | 1000 | 1284 | 1284000 | - | 1000 |
| 10 | ՊԷՍ-3Դ | կգ | 600 | 26600 | 15960000 | - | 600 |

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէսքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2 N ՇՀԱՊՁԲ-7/10-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության-

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**մինչև փոփոխությունը**

| հ/հ | Գնման առարկան | CPV կոդ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. Ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ | հոկտ | նոյեմբ | դեկտեմբ |
| 1 | Վերետիոն ԱՌԻ | 09211600/4/4/3 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 |
| 2 | Կոմպրեսորային ԿՁ-10 | 09211200/2/4/3 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 |
| 3 | Տրանսֆորմատորային ԳԿ | 09211620/2/4/3 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 |
| 4 | ԽՖ-22-24 | 09211620/3/4/3 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 |
| 5 | Ցիատիմ-201 | 24951100/1/4/3 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 |
| 6 | Ցիատիմ-203 | 24951100/2/4/3 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 |
| 7 | Քսուք 158 | 24951100/7/4/3 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 |
| 8 | ՌՈՍԱ-ԴՕՏ-4 | 09211650/1/4/3 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 |
| 9 | Ամորտիզացիոն Աժ-12 | 09211800/1/4/3 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 |
| 10 | ՊԷՍ-3Դ | 24951300/3/4/3 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 |

**թիվ 1 փոփոխությամբ**

ՀՀ դրամ

| հ/հ | Գնման առարկան | CPV կոդ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. Ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ | հոկտ | նոյեմբ | դեկտեմբ |
| 1 | Վերետիոն ԱՌԻ | 09211600/4/4/3 | -- | -- | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 | 3267000 |
| 2 | Կոմպրեսորային ԿՁ-10 | 09211200/2/4/3 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 | 453600 |
| 3 | Տրանսֆորմատորային ԳԿ | 09211620/2/4/3 | -- | -- | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 | 739800 |
| 4 | ԽՖ-22-24 | 09211620/3/4/3 | -- | -- | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 | 93120 |
| 5 | Ցիատիմ-201 | 24951100/1/4/3 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 | 4806000 |
| 6 | Ցիատիմ-203 | 24951100/2/4/3 | -- | -- | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 | 2403000 |
| 7 | Քսուք 158 | 24951100/7/4/3 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 | 193800 |
| 8 | ՌՈՍԱ-ԴՕՏ-4 | 09211650/1/4/3 | -- | -- | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 | 9090000 |
| 9 | Ամորտիզացիոն Աժ-12 | 09211800/1/4/3 | -- | -- | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 | 1284000 |
| 10 | ՊԷՍ-3Դ | 24951300/3/4/3 | -- | -- | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 | 15960000 |

*Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մոսէնքո» ՍՊԸ
ք.Երևան,Նար-Դոս
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ